Բուսական և կենդանական պաշարներ

Արդի կլիմայի փոփոխության դրսևորումների պայմաններում առանձնակի կարևորվում է հանրապետության անտառների պահպանության ու վերականգնման հիմնախնդիրը: Այսօր անտառապատ է հանրապետության տարածքի ընդամենը 11%-ը: Մեր անտառների զգալի մասը տարածվում են զառիթափ լեռնալանջերին և ունեն հողապաշտպան ու միջավայրապահպանող բացառիկ նշանակություն: Այդ պատճառով էլ անտառահատումը թույլատրվում է միայն անտառավերականգնման ու սանիտարական նպատակներով: Ներկայումս մշակվել և էկոլոգիական մի շարք ծրագրերի շրջանակներում կատարվում են անտառավերականգնման աշխատանքներ: Միաժամանակ հետևողական աշխատանքներ են տարվում անտառների կենդանական աշխարհի պահպանման և նույնիսկ բազմացման համար: Անտառների կենդանական աշխարհի պահպանման գործում լայնորեն օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչը հնարավորություն է տալիս նաև ուսումնասիրել կենդանիների պահվածքը: Անտառների պահպանությունը, դրանց զբաղեցրած տարածքների ընդլայնումը, արժեքավոր բնափայտով ծառատեսակների պահպանումն ու բազմացումը մեր հանրապետության էկոլոգիական անվտանգության առաջնային հիմնախնդիրներից են:

Բնական վտանգներ: Հանրապետության տարածքին բնորոշ են մթնոլորտային գրեթե բոլոր երևույթները, որոնք անմիջական ազդեցություն ունեն բնակչության տնտեսական գործունեության վրա և կարող են առաջացնել տարբեր մասշտաբների տարերային աղետներ (նկ. 1):

Այսպես օրինակ՝ տեղումներից առաջացած հեղեղումները ակտիվացնում են վտանգավոր էկզոգեն պրոցեսները՝ սողանքներ, քարաթափումներ, ժայռերի էրոզիա, սելավներ, որոնք մեծ վտանգ են ներկայացնում բնակավայրերի, ճանապարհների, կամուրջների, ջրամբարների և բազմաթիվ այլ



Նկ. 1. *ՀՀ մարզերի խոցելիությունը հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների նկատմամբ:*
(Քարտեզի հեղինակ Տ. Բաբայան)

ենթակառուցվածքների կենսունակության և նույնիսկ՝ ֆիզիկական գոյության համար:

Էկոլոգիական անվտանգության այս հիմնահարցի առաջնայնությունը մեզանում դրսևորվեց 2024թ մայիսի 24–26–ին, երբ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում դիտվեցին ինտենսիվ տեղումներ, որոնց առավելագույն քանակը գրանցվվեց Լոռու և Տավուշի մարզերում: Դեբեդ և Աղստև գետերում ջրի մակարդակը կտրուկ բարձրացավ ավելի քան 2 մետրով, ինչի հետևանքով հեղեղվեցին գետերի հարակից բնակավայրերը, տնտեսական ենթակատրուցվածքները, դադարեց գործել երկաթուղին, առանձնակի տուժեցին Ալավերդի քաղաքի գետափնյա թաղամասերը:

Հիդրոօդերևութաբանական առավել վտանգավոր երևույթներից է կարկտահարությունը: Այս երևույթը դիտվում է Հայաստանի Հանրապետության

ինտենսիվ գյուղատնտեսության գրեթե բոլոր շրջաններում:

Տեխնածին վրանգներով պայմանավորված էկոլոգիական անվտանգության օբյեկտներ են հանրապետության ջրամբարները, թունելներն ու կամուրջները, էլեկտրոկայանները և հատկապես պոչամբարները: Այս օբյեկտները իրենց գոյության ընթացքում ընդունակ են «ծերանալու», ինչը կարող է հիայտ գալ հատկապես երկրաշարժերի ժամանակ: Հայաստանի Հանրապետությունը ցավոք ունի նման իրավիճակի տխուր դեպք, երբ 1988թ. դեկտեմբերի 7-ին հանրապետության հյուսիսային հատվածը խիստ տուժեց ավերիչ երկրաշարժից: Սեյսմիկ անվտանգության նորմերի պահպանությունը, կառույցների մշտական վերահսկողությունը նույնպես էկոլոգիական անվտանգության հիմնահարցեր են:

Այս բոլորը էկոլոգիական անվտանգության ներքին սպառնալիքներ են: Աշխարհի բոլոր պետությունները, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը կարող են ունենալ նաև **էկոլոգիական անվտանգության արտաքին սպառնալիքներ:** *Այդ սպառնալիքներից են էկոլոգիական ագրեսիան պատերազմական գործողությունների ժամանակ (քիմիական և բակտերիոլոգիական, հրկիզող զինատեսակներ), դիվերսիոն (ցանքատարածքների, խմելու ջրի աղբյուրների թունավորում), վատորակ սննդամթերքի ներմուծում և այլն: Այս, ինչպես նաև միջուկային անվտանգության սպառնալիքը միաժամանակ պաշտպանական անվտանգության շրջանակներում են: Կան նաև ոչ դիտավորյալ միջսահմանային, տարածաշրջանային և համամոլորակային էկոլոգիական անվտանգության խնդիրներ, ինչպես օրինակ թթվային անձրևը, աղտոտված գետերի հոսք, կլիմայի փոփոխությունը, հարևան երկրներում տեխնածին աղետների առաջացրած խնդիրներ, ինչպես նաև երկրի տրանսպորտային ուղիներով (նաև օդային) վտանգավոր նյութերի տեղափոխումը:*